«Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամ

«Նախադպրոցական հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացման» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Դերային խաղի զարգացման առանձնահատկությունները նախադպրոցական տարիքում

Դաստիարակ՝ Մելքոնյան Գայանե

Հուսո Առագաստ մանկապարտեզ ՀՈԱԿ

2023թ.

Բովանդակություն

Ներածություն----------3

Գլուխ Դերային խաղի զարգացման առանձնահատկությունները նախադպրոցական տարիքում

2.1 Տեսական մաս----------4

2.2 Հետազոտության ընթացքը----------6

3. Եզրակացություն----------9

4. Գրականության ցանկ ----------10

5. Հավելված----------11

Ներածություն

Դերախաղի ժամանակ երեխան դառնում է նախաձեռնող, ակտիվ: Թատրոն դերախաղերը երեխայի մոտ զարգացնում են գեղարվեստական մտածողությունը, ստեղծագործական երևակայությունը: Թատրոն-դերախաղը տալիս է հաղորդակցվելու, ուշադրությունը կենտրոնացնելու կարողություններ, զարգացած մտածողություն, արագ կողմնորաշվելու, ճիշտ լուծումներ գտնելու կարողություն, ուրիշներին օգնելու պարտականություն: Խաղը, դերախաղը, բեմականացումը և վերջապես թատրոնը երեխայի զարգացման հրաշալի միջոց են, մասնավորապես իրավիճակային դերախաղերը, որոնք նաև հանկարծաստեղծման (իմպրովիզացիայի) մեծ հնարավորություն են տալիս երեխային՝ զարգացնելով նրան նրա մտածողությունն ու սոցիալական հմտությունները: Դերային խաղն ուսման և հոգեբանության մեջ կիրառվող մեթոդ է: Դերային խաղի ժամանակ ձեռք բերած փորձը և գիտելիքները պահպանվում է երկար ժամանակ: Դերային խաղերը երեխայի մեջ հմտություններ զարգացնելու լավ միջոց են, որոնք օգտակար կլինեն ապագայում: Դերախաղերի ժամանակ երեխան սկսում է զգալ իրեն որպես ընդհանուր խմբի անդամ, արդարացիորեն գնահատել իր և ընկերների գործողությունները և արարքները: Լ.Ս.Վիգոտսկու կարծիքով ՝ քիչ խաղացող երեխան կորցնում է զարգացման բազում հնարավորություններ:

Հետազոտության նպատակն է ներկայացնել, թե ինչպես են դերախաղերը օգնում երեխաներին ձեռք բերելու գիտելիքներ միասնականության և ընկերասիրության մասին, զարգացնում երեխայի խոսքը, ստեղծագործական երևակայությունը, նպաստում անհատականության դրսևորմանը, զարգացնում կերպավորման, կերպարանափոխության, հմտությունների իմպրովիզ անելու կարողության զարգացում, խմբով աշխատելու կարողության զարգացում, վերլուծելու, համադրելու ունակության ձեռքբերում, գեղարվեստական մտածողության, գեղագիտական ճաշակի զարգացում, միմիկայի զարգացում:

2. Դերային խաղի զարգացման առանձնահատկությունները նախադպրոցական տարիքում

2.1 ՏԵՍԱԿԱՆ ՄԱՍ

Դերախաղերը սկսեցին զարգանալ 1960-ականներից: Այն խոսքային, խաղային ուսուցման միաժամանակ գործընթաց է: Յուրաքանչյուր խաղացող կստեղծի իր պատմությունը կամ սյուժեն պատկերացնելով, որ ինքը իրական հերոս է մտնելով ֆանտազիայով լի մի մտածացին աշխարհ: Դերային խաղերը ունեն որոշակի պարտականություններ, ինչպիսիք են կանոնները ղեկավարելը և համագործակցություն իրականացնելը: Խաղի ընթացքում երեխան գտնվում է խոսքային պատրաստականության մեջ, ուշադիր լսում է դաստիարակին և ընկերներին: Անընդհատ կրկնվող բառերը չեն հոգնեցնում ու ձանձրացնում նրանց: Խաղը նախադպրոցական տարիքի երեխաների հիմնական գործունեությունն է: Խաղի մեջ տեղի է ունենում իրականության պատկերավոր, գործուն արտացոլումն է: Խաղալով՝ երեխաները պատկերում են կյանքի տարբեր իրողությունները, ընդօրինակում մեծերին, խաղի մեջ նրանք դնում են նպատակներ, որոնց հասնելը նրանց հրապուրում ուրախություն է պատճառում:

Խաղը կյանքի արտացոլումն է: Այն հնարավորություն է տալիս երեխային մտնել իր համար անմատչելի իրավիճակների մեջ:Խաղի մեջ միաժամանակ նա հանդես է գալիս և դրամատուրգի, և դեկոռատորի, և դերասանի դերում:

Ամենակարևոր և առաջատար գործունեությունը, որն ի հայտ է գալիս երեխաների մոտ դա սյուժետադերային խաղն է:

Այն դիտարկվում է որպես վարքի փորձառության հավաքագրման ու կշռադատման ընդհանրական և երեխայի բարոյական ու սոցիալական ձգտումների հիմնական բաղկացուցիչների ձևավորման միջոց: Խաղի ընթացքում տիրապետող է զգայական այնպիսի մթնոլորտ, որը նպաստում է երեխայի ապրումակցային խառնվածքի, այն է՝ ուշադրության, նրբազգացողության, հոգատարության, պատրաստակամության,

բարիացակամության և արդարացիության հատկանիշների ձևավորմանը: Խաղը երեխային դարձնում է գործուն սուբյեկտ, նպատսում կախյալ, անհամարձակ, անվստահ երեխաների անհատական աճին ու զարգացմանը այսպիսով անգնահատելի է խաղային գործունեության դերն ու նշանակությունը երեխայի հոգեկանի ձևավորման և նրա հոգևոր կյանքի հարստացման առումով: Դերային խաղն ավելի մոտ է իրականությանը. ուշադրություն է դարձվում մանրամասներին, ժամանակին և տարածությանը:

Երեխան վերարտադրում է իրեն լավ ծանոթ իրավիճակներն ու հարաբերությունները: Այդ խաղերը սովորաբար մեծերի կյանքի մանկական մեկնաբանություններն են, որոնցում դրսևորվում է փոքրերի վերաբերմունքը մեծերի «խաղի» նկատմամբ: Դերաբաժանումը կարևոր սոցիալական նշանակություն ունի. այն սովորաբար ինքնաբերաբար է կատարվում ի տարբերություն ներկայացման նախապատրաստմանը: Այդ ընթացքում երեխան գնահատում ու յուրացնում է հասարակության մեջ ընդունված սոցիալական դերերն ու հարաբերությունները վերարտադրում դրանք: Օգտագործելով, փոխարինելու, համոզելու, բանակցելու ունակությունները լուծվում են խաղընկերների հետ առաջացող պրոբլեմները:

Խաղի դաստիարակչական նշանակությունը ընդգծել է Հովհաննես Թումանյանը: Նա գտնում էր, որ խաղը մարդու համար բնական օրգանական պահանջ է՝ նրա լրջությունն է, նրա էությունը: Կյանքում ամեն բանի նա խաղով է քննում, խաղով ճանաչում և ընդունում և ամեն բան, ինչ-որ նրան տրվում է խաղով, ուրախությունով է ընդունում և յուրացվում:Դեռևս անցյալ դարում ռուս մեծ մանկավարժ Կ.Դ.Ուշինսկին տվել է խաղի էության, որպես իրականության արտացոլման, մեկնաբանումը: Տարբեր պայմաններում ապրող երեխաների խաղերը ուժեղ կերպով տարբերվում են իրարից:«Մեկ աղջկա մոտ տիկնիկը կարկատում է, կարում, լվանում և արդուկում, մյուսի մոտ՝ ընդունում է հյուրեր, շտապում թատրոն կամ զբոսանքի, երրորդի մոտ ծեծում է մարդկանց, սարքում է գանձատուփ, հաշվում փողերը»:

2.ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ

Հետազոտության ժամանակ աշխատել ենք միջին խմբում, թվով 33 երեխա է մասնակցել պարապմունքին: ԽԻԿ մեթոդով իրականացրել ենք պարապմունքը և աշխատել ենք դերային խաղ պարապմունքի պլանով: Ուսումնասիրված թեման է << Տուն-տուն>> կամ <<Ընտանիք>>:

Պարապմունքի անցկացման նպատակը

-երեխաներին հնարավորություն տալ ինքնուրույն ներկայացնելու այնպիսի իրավիճակ, որտեղ պահանջվում է հետևել էթիկայի կանոններին ընտանիքում, ընտանիքի անդամների միջև փոխհարաբերություններում:

-տղաների կատարած աշխատանքին և աղջիկների պարտականություններին:

Պարապմունքի անցկացման խնդիրները.

-զարգացնել իմացական, ճանաչողական կարողությունները,

-սովորեցնել թիմային աշխատանքին՝ խաղի միջոցով,

-զարգացնել համագործակցելու ունակությունը:

Անհրաժեշտ պարագաները

Ցուցադրական- շինարարական պարագաներ, վարպետի, փականագործի, հյուսնի գործիքների հավաքածու, աղջիկների տարածքում՝ կարի մեքենա, խոհանոցային կահույք, սպասք:

Բաշխիչ-գունավոր թղթեր, հեքիաթի հերոսների կերպարներով պաստառներ:

Ֆիզկուլտդադար

Խաղ-<<Կատարիր հակառակը>>

Տատիկը շատ լավիկն է.

Պահում է զույգ ուլիկներ

Մի մոխրագույն, մի դարչնագույն

Մի զույգ ուրախ ուլիկներ:

Տատիկն իր կամակոր ուլիկների հետ սիրում է խաղալ <<Կատարիր հակառակը>> խաղը: Երեխաների հետ խաղում ենք այս խաղը:

Պարապմունքի ժամանակ աղջիկները օգնում էին մայրիկին, մեկը մաքրում էր հատակը, մյուսը՝ տատիկի հետ պատրաստում էր նախաճաշը: Տղաները իրենց հայրիկի հետ նորոգում էին կոտրված աթոռը: Մայրիկը աղջիկների հետ դասավորում էին սեղանի սպասքը: Մայրիկը բոլորին հրավիրում է նախաճաշի:

-Համեցեք, նախաճաշը պատրաստ է:

Բոլորը նստում են սեղանի շուրջ: Ուտելուց հետո բոլորը հայտնում են իրենց շնորհակալությունը և գնում իրենց գործին: Կողքից հետևել եմ պարապմունքի ընթացքին, ուշադրություն եմ դարձրել երեխաների սեղանի շուրջ իրենց պահելու կանոններին: Խաղը կարելի է շարունակել՝ փոխելով երեխաների խումբը: Ֆիսկուլտ դադարից հետո երեխաները դերային խաղի օգնությամբ ներկայացրել են՝ Հովհաննես Թումանյանի <<Քաջ Նազար>> հեքիաթը:

Նյութ -Հեքիաթի հերոսների ամբողջական և կտրատված պատկերներ, քարտերի հավաքածու՝ հեքիաթի հերոսների պատկերներով:

-Հեքիաթի հերոսների հագուստներ և դիմակներ:

-Գունավոր մատիտներ, ֆլոմաստերներ, պլաստիլին:

Պարապմունքի ընթացքը

Խաղից առաջ անցկացվում է նախապատրաստական աշխատանք, որի ընթացքում երեխաները վերհիշում են հեքիաթի բովանդակությունը: Տրվում են հեքիաթի բովանդակությանը վերաբերող հարցեր:

- Ո՞վ է Քաջ Նազարը:

- Ինչպիսի՞ն է հեքիաթի գլխավոր հերոսը։

Երեխաները վերհիշելով հեքիաթը, ներկայացրեցին բեմադրությունը՝ կերպարները լավ պատկերացնելով։

Պարապմունքից հետո դիտարկողները դիտարկելով պարապմունքը՝ գրավոր պատասխանել են պարապմունքի մասին հարցերին։

3 դիտարկողներ ներկա էին պարապմունքին և եկան հետևյալ եզրակացության՝

1. Ներկա եմ գտնվել միջին խմբի խոսքի զարգացման պարապմունքին։ Պարապմունքի ընթացքում ներկայացվել է խաղ՝ Հովհաննես Թումանյանի «Քաջ Նազարը» հեքիաթը։ Երեխաներն ակտիվ էին, բոլորը ձգտում էին մասնակցել խաղին։ Երեխաները մի փոքր դժվարությամբ կարողացան նկարել կերպարները։ Անհրաժեշտ է խոսքը առավել զարգացնել։
2. Ուշադիր լսեցին հեքիաթը, տրված հարցերին կարողացան պատասխանել։ Խաղին ակտիվ էին բոլորը։ Մի փոքր պետք է աշխատել ձայնային տեմբրի վրա։
3. Արձանագրեցի նրանց մոտ գեղագիտական ճաշակ գեղարվեստական գրականության նկատմամբ։ Հեքիաթը հագեցված էր դերային կերպարներով, հագուստներով, դեկորներով։ Երեխաները իրենց զգում էին անկաշկանդ։

Եզրակացություն

Հետազոտական աշխատանքի ավարտին կարող ենք ասել, որ այն նպատակները, որոնք դրվել էին պարապմունքի անցկացման համար, մենք կարողացանք հասնել։ Այդ

մասին վկայեցին երեխաների դերային խաղերի կատարման կարողությունները: Հարգելի գործընկերներ խորհուրդ կտամ ուշադրություն դարձնել պարապմունքների ժամանակ, որ այս մեթոդով ներգրավված լինեն խաղում բոլոր երեխաները և դա կնպաստի երեխաների աշխարհաճանաչմանը՝ որպես իմացական գործունեություն, կնպաստի երեխաների լեզվական կարողունակությունների զարգացմանը, քանի որ այս ամենը երեխաների մոտ կավելացնի հետաքրքրությունը և ավելի մեծ ոգևորվածությամբ կներգրավվեն դասին : Խաղը, դերախաղը, բեմականացումը երեխայի զարգացման հրաշալի միջոց է: Դերախաղերը հնարավորություն են տալիս զարգացնել մտածողությունը, խոսքը և սոցիալական հմտությունները: Ըստ ինձ դերախաղի ամբողջ նպատակը այն է, որ երեխաները սովորեն անմիջական և անկաշկանդ հաղորդակցվել իրար հետ: Դերային խաղերը նպաստում է երեխայի անհատական առանձնահատկությունների բացահայտմանը և ստեղծագործական ընդունակությունների զարգացմանը: Զարգանում է երեխայի երևակայությունը, կերպավորման, կերպարանափոխության հմտությունները, իմպրովիզ անելու կարողությունը:

Գրականության ցանկ

1. Аркин, Е.А. Ребенок в дошкольные годы [Текст] / Под ред. А.В. Запорожца, В.В. Давыдова. М.: Просвещение, 1967. – 430с.
2. Аникеева, Н.П. Воспитание игрой [Текст] / Н.П. Аникеева.- М.: Просвещение, 1987.- 230с.
3. Воспитание детей в игре [Текст] / Под ред. Д.В. Менджерицкой. – М.: Просвещение, 1979. – 336 с.
4. Вопросы обучения и воспитания умственно отсталых школьников [Текст] / Под ред. Н.П. Долгобородова.- Ленинград, 1969.- 340с.

Հավելված

AUTUMN осень
ՁՄԵՌ WINTER зима
ՄԱՆՉՈՒԿ
SUPERMARKET
ՀԱՍՑԵ՝ Ք. ԳՅՈՒՄՐԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ 125
ՀԵՌ.՝ 043 300 700
ԱՆՀԱՏԱՐՈՒՑԵ ՆՎԵՐ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ
"ՄԱՆՉՈՒԿ ՍՈՒՊԵՐՄԱՐԿԵՏ"-ԻՑ
Smile

SKATE
ALL
DAY
LONG